



Մ ՈՒՐՐԵ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵՒ ԿԵՂԵՅԻ



ԾԱՆՈՒԵԱՆ ՊԱՇՏԵՐ ԵՐՐՈՐԴ ՕՐ

01 ՅՈՒՆԻՄԱՐ 2017

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ս. Յակոբի Տօնին Առիթով	Էջ 2
Ծանուցումներ	Էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՅԻ ԳԻՐՔԷՆ

51.15-52.3

Այսպէս կ'ըսէ Տէրը.- «Ես, ե՛ս եմ քու Տէր Աստուածդ որ ծովը կը խռովեմ եւ ալիքները կը յուզեմ. ԱՄԵՆԱԿԱԼ Տէ՛ր է անունս: Իմ պատգամներս պիտի պատմես դուն. քեզ պիտի պահպանեմ ձեռքիս տակ, որով երկիրքը հաստատեցի եւ երկրին հիմերը դրի, եւ Սիոնին պիտի ըսեմ.- Իմ ժողովուրդս ես դուն»: Արթնցի՛ր, արթնցի՛ր եւ ոտքի՛ կանգնէ, Երուսաղէ՛մ, դուն՝ որ Տիրոջ բարկութեան բաժակը խմեցիր իր ձեռքէն, կործանումի եւ սրտամտութեան բաժակը ցմրուր քամեցիր: Ծնած որդիներէդ ո՛չ մէկը մնաց քեզ մխիթարելու համար. մեծցուցած զաւակներէդ ո՛չ մէկը մնաց օգնութեան ձեռք երկարելու համար քեզի: Զոյգ չարիքներ քեզ հարուածեցին, - ո՛վ պիտի ցաւակցի քեզի - երկիրդ կործանեցաւ եւ աւերուեցաւ, բնակիչներդ սովէն ու սուրէն կոտորուեցան. - ո՛վ քեզ պիտի մխիթարէ-: Զօրութենէ պարպուած քու զաւակներդ փողոցներու անկիւնները ինկած պառկած են թակարդի մէջ բռնուած յամոյրի պէս, Տիրոջ բարկութենէն զինովցած, Աստուծոյ յանդիմանութենէն շփոթահար: Ուստի լսէ՛, ո՛վ դժբախտ, որ առանց զինիի հարբած ես: Այսպէս կ'ըսէ Տէր Աստուածդ, քու Աստուածդ, ժողովուրդիդ պաշտպանը.- «Ահա ձեռքէդ կ'առնեմ կործանումի բաժակը,

իմ սրտամտութեանս բաժակը, որմէ պիտի չխմես այլեւս, եւ զայն կու տամ քեզ կեղեքողներուն եւ նախատողներուն ձեռքը, անոնց՝ որոնք քեզի կ'ըսէին. «Սոնարհէ՛ որ վրայէդ անցնինք», եւ դուն մէջքդ գետնին կը հաւասարեցնէիր որպէսզի անոնք անցնին վրայէդ»: Արթնցի՛ր, արթնցի՛ր, Սիո՛ն. եւ զօրութիւնդ զգեցիր, Սիո՛ն. փառաւոր հագուստներդ հագուէ Երուսաղէ՛մ, սո՛ւրբ քաղաք, որովհետեւ պիղծերն ու անթլիփատները այլեւս պիտի չմտնեն քու դռներէդ: Թօթափէ՛ փոշիդ, ե՛լ նստէ, քակէ՛ պարանոցիդ կապերը ո՛վ Երուսաղէմ, Սիոնի գերի աղջիկ, որովհետեւ այսպէս կ'ըսէ Տէրը.- «Ինչպէս ձրի վաճառուեցաք, այնպէս ալ ձրի պիտի փրկուիք»:

«Ինչպէս ձրի վաճառուեցաք, այնպէս ալ ձրի պիտի փրկուիք»:

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԱՅԵՑԵՑԻՆԵՐՈՒՆ

ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

13.18-25

Աղօթեցէ՛ք մեզի համար, որովհետեւ համոզուած ենք թէ մեր խիղճը մաքուր է, եւ կ'ողբենք ամէն բանի մէջ ուղիղ գործել: Մանաւանդ կ'աղաչեմ որ աղօթէք ինծի համար, որպէսզի կարենամ աւելի շուտ ձեզի վերադառնալ: Թող խաղաղութեան Աստուածը ձեզի կարողութիւն տայ՝ ամէն տեսակ բարեգործութեամբ իր կամքը կատարելու...

Թող խաղաղութեան Աստուածը ձեզի կարողութիւն տայ՝ ամէն տեսակ բարեգործութեամբ իր կամքը կատարելու...

կամքը կատարելու, որովհետեւ ի՛նքն էր որ մեռելներէն յարուցանեց մեր Տէր Յիսուսը, ան՝ որ իր արիւնով կնքուած յաւիտենական ուխտով Հովուապետ եղաւ ամբողջ հօտին: Աստուած ինչ որ կը կամենայ՝ թող ներգործէ մեր մէջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ, որուն փա՛ռք յաւիտեանս: Ամէն: Եղբայրներ, կ'ողաչեմ որ լսէք այս կարճ նամակով տուած յորդորներս: Կ'ուզեմ որ գիտնաք, թէ մեր եղբայրը՝ Տիմոթէոս բանտէ արձակուած է հիմա: Եթէ շուտով մօտս գայ, միասին կու գանք ձեզ տեսնելու: Ողջոյններս հաղորդեցէք ձեր բոլոր առաջնորդներուն եւ բոլոր հաւատացեալներուն: Իտալիայի եղբայրները կ'ողջունեն ձեզ: Աստուծոյ շնորհքը բոլորիդ հետ ըլլայ: Ամէն:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ**

22.24-30

Աշակերտներուն մէջ վէճ ծագեցաւ թէ իրենցմէ ո՛վ պիտի նկատուի մեծը: Յիսուս անոնց ըսաւ.- Ազգերու թագաւորները կը տիրեն իրենց ժողովուրդներուն վրայ եւ իշխողները բարերար

... ձեր մէջէն ամենէն մեծը թող ամենէն պզտիկին պէս ըլլայ, եւ առաջնորդը՝ սպասաւորին պէս:

կը կոչուին իրենց հպատակներուն կողմէ: Բայց ձեր պարագային այդպէս պէտք չէ ըլլայ: Ընդհակառակը, ձեր մէջէն ամենէն մեծը թող ամենէն պզտիկին պէս ըլլայ, եւ առաջնորդը՝ սպասաւորին պէս: Ո՞վ է մեծը. սեղան

բազմո՞ղը թէ սպասաւորը: Անշուշտ որ սեղան բազմողը: Բայց ես ձեր մէջ սպասաւորի պէս եմ: Դուք միշտ քովս մնացիք փորձութիւններու ընթացքին, եւ ես ահա կը խոստանամ թագաւորութիւն տալ ձեզի, ինչպէս Հայրս ինծի տալ խոստացաւ: Իմ թագաւորութեանս մէջ իմ սեղանէս պիտի ուտէք ու խմէք եւ պիտի բազմիք գահերու վրայ՝ դատելու համար Իսրայէլի տասներկու ցեղերը:

**Ս. ՅԱԿՈՒԲԻ
ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ
Ս. 3.**

Կիրակի, 18 Դեկտեմբեր 2016-ին, Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցին կատարեց իր հովանաւոր սուրբին տօնը: Ս. Պատարագը մատուցեց եւ պատգամեց Առաջնորդ սրբազան հայրը՝ Գերշ. Տ. Բաբգէն Արքեպիսկոս:

Հակառակ ցուրտ օդին, եկեղեցին կը յորդէր հաւատացեալներու բազմութեամբ: Դպրաց դասը ներշնչիչ երգեցողութիւն մը ունեցաւ խմբավարութեամբ Տիկ. Յասմիկ Գասպարեանի եւ երգեհոնահարութեամբ՝ Պրն. Խաչատուր Ղազարեանի:

Տ. եւ Տիկ. Յակոբ եւ Անահիտ Ամիրեան նոր շապիկներ նուիրած էին դպրաց դասին՝ տօնական օրը աւելի փայլուն դարձնելով: Նոր շապիկներու պատրաստութեան մէջ յատկապէս յիշատակելի են ճիգերը նուիրատու ամուլին որդւոյն՝ Պրն. Արտէն Ամիրեանի, նաեւ Դպրաց դասէն՝ երէցկին Նինա Չիֆթճեան-Գոյունեանի եւ տիկ. Անի Գարամանուկեան-Շաղճեանի: Շապիկները կարուած էին Չինաստանի մէջ:

Ս. Պատարագէն ետք, ինչպէս համայնքին աւանդութիւնն է, Հոգեհանգստեան մէջ յիշուեցան համայնքին բարերարները՝ Հրանդ, Երուանդ եւ Յակոբ Բասդրմաճեան եղբարք, Պօղոս Սվաճեան, Աստղիկ Սարաֆեան, Տիգրան Հաճէթեան, Հայկ Մարգարեան, Յակոբ Գալֆայեան, Սուրէն եւ Արմինէ Մաղաքեան եւ ժիրայր Շիրինեան:



Յետ սրբազան արարողութիւններուն, ՀՄԸՄ-Կամք/Հայկ Մարգարեան մարզասրահին մէջ աւանդական Սիրոյ ծաշն էր: Ծաշի ընթացքին յայտագիրը ներառած էր Ս. Յակոբի Կիրակնօրեայի մասին զեկուցում-արժեւորում մը, որ տնօրէնին՝ Պրն. Թորոս Պապիկեանի խօսքը եղաւ: Ապա Առաջնորդ սրբազանին ձեռամբ զնահատագիր ստացաւ եկեղեցւոյ նախկին երգեհոնահարը՝ Տիկ. Մարիէթ Էյնէշլեան-Նիլեան: Նշուեցաւ «Նոր Ծաղիկ» մանկապատանեկան երգչախումբին տասնամեակը: Յուցադրուեցաւ երգչախումբին հայաշունչ եւ ներշնչող տասնամեան ամփոփած տեսասլիկ մը: Եւ դարձեալ Առաջնորդ սրբազանին ձեռամբ զնահատագիրներ ստացան «Նոր Ծաղիկ»ի առաջին դաշնակահարը՝ Տիկ. Անի Թորիկեան-Պապիկեան եւ այժմու դաշնակահարը՝ Տիկ. Դալար Հարպոյեան-Գալլօղլեան: Հոգաբարձութեան ատենապետ՝ Պրն. Գէորգ Օհանեանի ձեռամբ զնահատանքի յուշատախտակներ ստացան՝ Մեսրոպ Մաշտոցի շքանշանակալի խմբավարը՝ Տիկ. Էլօ Պողոունի-Հարպոյեան, դաշնակահարները եւ «Նոր Ծաղիկ-



»եան առաջին խումբէն՝ 2006-2007 տարեշրջանի տակաւին յանձնառու ձայնաւորներ՝ Մելիսա Յարութիւնեան, Կորիւն Գոյունեան, Նարեկ Չէրքէզեան, Թամար Տէմիրճեան, Սեւակ Պապիկեան, Ալիք Ժաքմաքէլեան եւ Նայիրի Էլիբեկեան: Հովիւ՝ Արժ. Տ. Գառնիկ Աւ. Քհնյ. Գոյունեան





յայտարարեց, թէ յառաջիկայ տարի՝ Շաբաթ, 21 Հոկտեմբեր 2017-ին, «Նոր Ծաղիկ»ը հանդիսաւորապէս պիտի տօնէ իր տասնամեակը՝ հայ մշակոյթին հրամցնելով մանկապատանեկան համերգային պատարագ մը, որուն երաժշտութիւնը գրած է հայրենի տաղանդաւոր յորինող՝ Պրն. Արեգ Լուսինեան: Համերգը պիտի վայելէ Օրհնութիւնը Առաջնորդին, Համագոր-

ծակցութիւնը՝ ՀՕՄի Գանատայի Շրջանային Վարչութեան, Նախագահութիւնը Տիկ. Շաքէ Կէօնճեանի եւ սատարը Տ. եւ Տիկ. Արտէն եւ Քրիստին Տէրվիչեանի: Համերգը պիտի ըլլայ ի նպաստ Ստեփանակերտի (Արցախ) «Սօսէ» մանկապարտէզին: Վայր ընտրուած է Centre Arménie-ն (1025 Boul. Elizabeth, Laval):

Ճ Ր Ա Գ Ա Լ Ո Յ Յ
 ՀԻՆԱՇԱՔԹԻ, 5 ՅՈՒՆՈՒԲ 2017

ՍԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ
 ԵՒ
ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ
ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐՈՒ

ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՄ 5.30-ԻՆ
 ԱՊԱ
 ԺԱՄ 6.30-ԻՆ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ
ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ
 ՈՒՐԲԱԹ, 6 ՅՈՒՆՈՒԲ 2017

ՍԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ
 Առաջօրէան ժամ 9.30-ԻՆ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ
 Առաջօրէան ժամ 11.00-ԻՆ

ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ ԵՒ ԿԸ ՔԱՐՈԶԷ
 ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԷՆ Ս. ԱՐԲ.
 ԳԱԹԱՐՈՅԵԱՆ
 ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՈՒՉ